## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԳՐՈՔԻՄԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԵՎ ՍՊԻՏԱԿԻ ՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ

## Բ Ա Ն Ա Ձ Ե Վ Ը

*Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ագրոքիմիայի լաբորատորիայի և Սպիտակի շրջանի գյուղատնտեսության աշխատողների համատեղ գիտա-արտադրական կոնֆերանսը՝ նվիրված շրջանի հողագործության քիմիացման հարցերին, հավանություն է տալիս այդ կարևոր միջոցառմանը, որպես գյուղատնտեսության հետագա զարգացման և յոթնամյակի խնդիրների ժամկետից շուտ կատարման կարևոր նախաձեռնություն։*

### Կոնֆերանսը որոշում է՝

*1. Ընդունել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ագրոքիմիայի լաբորատորիայի միջոցառումների պլանը Սպիտակի շրջանի հողագործության լիակատար քիմիացման վերաբերյալ, պահանջել կոլտնտեսությունների նախագահներից, սովխոզների դիրեկցիաներից անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել այդ պլանի իրականացման գործում։*

*2. Ընդունել, որ առաջիկա 2—3 տարիների ընթացքում Ագրոքիմիայի լաբորատորիան իր մեթոդական, գիտական օժանդակող աշխատանքը պետք է կենտրոնացնի Սպիտակի սովխոզում, հասնելով այն բանին, որպեսզի սովխոզի գյուղատնտեսական կուլտուրաների, մասնավորապես, շաքարի ճակնդեղի բերքատվությունը շրջանում և ռեսպուբլիկայում հասցվի ամենաբարձր մակարդակին։*

*Այդ նպատակով պահանջել Սպիտակի սովխոզի դիրեկցիայից՝*

*ա) Բոլոր միջոցներով ապահովել սովխոզի քիմիացման 1960 թվականի պլանի իրագործումը։*

*բ) Հաշվի առնելով, որ քիմիացման արդյունքը կարող է առավել չափերի հասնել միայն բարձր ագրոտեխնիկայի ֆոնի վրա, ապահովել շաքարի ճակնդեղի պլանտացիաների ժամանակին նախապատրաստումը, քաղհանը, մշակությունը և աշխատանքի առավել մեքենայացումը։*

*գ) Բացի ցանովի խոտադաշտերից, առայժմ որպես արտադրական փորձ, պարարտացման էֆեկտիվության հաշվառում կատարել բնական խոտհարքների վրա։*

*դ) Ապահովել 1960/61 թվականների ընթացքում սովխոզում 6—8 հազար*

տոննա գոմաղբի կուտակումը։ Այդ նպատակով պրոֆինպլանի մեջ մտցնել նաև ցամքարանյութի կուտակումը։

ե) Խորհուրդ տալ կոլտնտեսությունների վարչություններին և սովխոզների դիրեկցիաներին բոլոր տնտեսություններում առանձնացնել 2—3 հեկտար հողատարածություն մշտական փորձադաշտ կազմակերպելու և տնտեսություններում ծագող ագրոտեխնիկական հարցերը տեղերում ուսումնասիրելու նպատակով։

3. Խնդրել Ժողտնտխորհի Սննդարդյունաբերության վարչությանը ապահովել Սպիտակի սովխոզում 1960 թվականի պլանով նախատեսնվող պարարտանյութերի պահանջվող քանակությունը՝ ամոնիում սելիտրա 280 տոննա, սուպերֆոսֆատ 500 տոննա, կալիում քլորիդ 100 տոննա, ինչպես նաև գոմաղբ բարձող ու ցրող և հանքային պարարտանյութերի փռող նոր մեքենաներ։

4. Խնդրել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ագրոքիմիայի լաբորատորիայից շարունակել աշխատանքները շրջանի մյուս կոլտնտեսությունների և սովխոզների համար քիմիացման պլանի նախագծեր կազմելու ուղղությամբ, այն հաշվով, որ 1960—65 թվականների ընթացքում կազմված և հիմնավորված լինի ամբողջ շրջանի գյուղատնտեսության քիմիացման պլանը։

5. Գիտա-արտադրական խորհրդակցությունը խնդրում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին պարտավորեցնելու Կիրովականի և Ալավերդու քիմկոմբինատներին, ինչպես և Ժողտնտխորհի Սովխոզների տրեստին, 1960 թվականից սկսած հանքային պարարտանյութերի լրացուցիչ ֆոնդ առանձնացնել համաձայն ամբողջ շրջանի քիմիացման տարեկան պլանների։